

Հայաստանը ՄՀՄԻ անդամ

[Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի](#) անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի **1992** թ. մարտի **17-18** տեղի ունեցած նիստի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունը դարձել է նշված ինստիտուտի անդամ –պետություն:

ՄՀՄԻ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեում ՀՀ կառավարության առաջին ներկայացուցիչը նշանակվել է Համլետ Վարդապետյանը՝ ՀՀ վարչապետի **1992** թ. դեկտեմբերի **16**-ի **N 594** որոշմամբ:

Ներկայումս ՄՀՄԻ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն է ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյան՝ ՀՀ վարչապետի **2008** թ. մարտի **13**-ի **N 125**-Ա որոշում, իսկ գիտական խորհրդի անդամն է ԵՊՀ հեռանկարային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Գեորգի Պողոսյանը:

Որպես ՄՀՄԻ անդամ պետություն Հայաստանի ներդրումն ինստիտուտի բյուջեում **2008** թ.- ին կազմել է **69.9** հզր ԱՄՆ դոլլար:

Ներկայումս ՄՀՄԻ-ում են գտնվում ՀՀ **19** գիտաշխատող, **5** ընտանիքի անդամ, **3** վարձու հիմունքներով աշխատող:

Որպես անդամ պետություն ՀՀ-ում ստեղծվել է ՄՀՄԻ հետ համագործակցությունը համակարգող հանձնաժողով՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի գլխավորությամբ: